ԹԱՄԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՕՊՏԻՄԱԼ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Պետականության ամրացմանը կոչված են աջակցելու իշխանության բոլոր ճյուղերը, երկրի ժողովրդավարական ու հայրենասիրական ուժերը, զանգվածային լրատվական միջոցները: Դրան է կոչված ձևավորվող քաղաքացիական հասարակությունը: «Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը հասարակական մտքի պատմության մեջ կիրառվում է XVII դարից: Համաձայն անգլիացի փիլիսոփա Հոբսի, մարդիկ բնական վիճակից, որի համար բնութագրական է «բոլորի պատերազմ բոլորի դեմ», հասարակական վիճակի անցումն է «Հասարակական դաշինքի» միջոցով: Այդ բանաձևման կողմնակից էին հետագայում Լոկը, Ռուսոն և այլ մտածողներ:

Լոկը, ինչպես և Հոբսը չէր տարբերակում իրարից «քաղաքացիական հասարակություն» և «պետություն» հասկացությունները և օգտագործում էր միևնույն իմաստով: Այդ հասկացությունների տարբերակումը սկսվել է XVIII դարում և ավարտվել XIX դարի սկզբին:

Հստակ տարբերակման վաստակը պատկանում է Հեգելին: Նա պնդում էր, «... քաղաքացիական հասարակության զարգացումը առաջ է գալիս ավելի ուշ, քան պետությունը, որը որպեսզի գոյատևի պետք է ունենա ինչ-որ ինքնուրույն բան: Քաղաքացիական հասարակությունը ստեղծվել է այնուամենայնիվ միայն ժամանակակից աշխարհում»[1]: Քաղաքացիական հասարակությունն ըստ Հեգելի որոշակի հանրության անդամների և իրավական հաստատությունների կապ է ըստ այդ անդամների պահանջմունքների, որն իրենից ներկայացնում է անդամների ու նրանց սեփականության ապահովման միջոց և ծառայում է նրանց շահերի պաշտպանությանը: Քաղաքացիական հասարակությունը մասնավոր շահի համակարգ է, իսկ պետությունն ընդհանուրի: Հասարակագիտական գրականությունում գոյություն ունեն քաղաքացիական հասարակության սահմանման երկու տարածված մոտեցում: Նրանցից մեկի կողմնակիցները «Քաղաքացիական հասարակությունը» դիտում են որպես յուրատեսակ սոցիալական համամիջոց, որպես հասարակական հարաբերությունների ամբողջական ու լայն համալիր, որը հակադիր է պետությանը նրա բոլոր ձևերում:

[1] Гегель Философия мира, М., 1990, с. 228.

Երկրորդ մոտեցումը նրանում է, որ քաղաքացիական հասարակությունը դիտվում է «արևմտյան քաղաքակրթության կոնկրետ երևույթ»[2]:

Նշված մոտեցումներից առաջինին կողմնակից հետազոտողները քաղաքացիական հասարակությունը սահմանում են հետևյալ կերպ: Կոչետկովը գրում է. «Այն ոչ պետական հասարակական հարաբերությունների և ինստիտուտների համախումբ է, որն արտահայտում է հասարակության բազմազան արժեքները, շահերը և պահանջմունքները»[3]:

Մարդկանց հասարակական և մասնավոր կյանքի բովանդակության ավելի լրիվ սահմանումը տալիս է Վարիվդինը: «Քաղաքացիական հասարակությունը մարդկային հանրույթի ամենաբարձր փուլն է ու ամենակատարյալ ձևը, որն իր մեջ ներառում է, որպես կառույցային տարրեր, մարդկանց հանրույթի կամավոր ձևավորած առաջնային արժեքներ ընտանիք, կորպորացիա, ասոցիացիա... Ինչպես նաև սոցիալական հանրույթներ, սակայն ոչ պետական և քաղաքական կառույցներ, հասարակությունում ոչ պետական, ոչ քաղաքական հարաբերություններ, տնտեսական, սոցիալական, ընտանեկան, ազգային, հոգևոր, բարոյական, կրոնական և այլ հարաբերություններ: Այն մարդկանց կամավոր և մասնավոր կյանք է, նրանց սովորույթները, ավանդույթները, կենցաղը, ազատ անհատների ու նրանց կազմակերպությունների ինքնաներկայացման ոլորտն է, սահմանափակված օրենքներով ու պաշտպանված պետական իշխանության կողմից ուղղակի միջամտությունից ու նրանց գործունեության կանոնակարգումից»[4]: Բերված սահմանումներում ուշադրություն է դարձվում քաղաքացիական հասարակություններում կառույցային ձևավորումների ոչ պետական բնույթի, նրանց ձևավորման կամավորության, ազատ անհատների և նրանց կազմակերպությունների ինքնաներկայացման վրա: Քաղաքացիական հասարակության սահմանման մյուս մոտեցումը որպես արևմտյան քաղաքակրթության կոնկրետ երևույթ, օգտագործվում է վերջին տարիներին մի շարք հետազոտություններում: Այդպես, Դերենդորֆը պնդում է. «փաստորեն քաղաքացիական հասարակությունը իսկական ժողովրդավարության և արդյունավետ շուկայական տնտեսության ընդհանուր հայտարարն է»[5]:

---

[2] Տես, Ильин М.В., Коваль Б.Н. Две стороны одной медали: гражданское общество и государство // Полис, 1992, № 1-2, с. 193.

[3] Кочетков А.П. О формировании гражданского общества // Социально-политические науки, 1992, № 1, с. 19.

[4] Варывдин В.А. Гражданское общество // Социально-полит. науки, 1992, № 8, с. 27.

[5] Дерендорф Р. Дорога к свободе: демократизация и ее проблемы в Восточной Европе // Вопросы философии, 1990, № 9, с. 78.

Քաղաքացիական հասարակության սահմանման տարածված մոտեցումներից բացի հանդիպում են այլ մոտեցումներ ևս: Այսպես, Կրասինը և Գալկինը քաղաքացիական հասարակությունը դիտում են որպես «հորիզոնական սոցիալական կապերի, հասարակական քաղաքական կողմնորոշումների և հասարակական վարքի նորմերի կայուն համակարգ, որը վերաճում է անմիջական սեփականատիրական հարաբերություններից, սակայն չի հանգում նրան»[6]:

Այդպիսով գրականության մեջ քաղաքացիական հասարակությունը դիտարկվում է որպես մարդկանց հանրույթ, որը հակադրվում է մյուս հանրույթին պետությանը: Ժամանակակից պայմաններում այդ հակադրությունը չափազանց դինամիկ է: Քաղաքացիական հասարակությունը պաշտպանում է անձի իրավունքն ու ազատությունը, իր իրավունքներն ու ազատությունները պետության հետ իր պայքարում, ազատվում է վերջինիս կոպիտ միջամտությունից, իր կենսագործունեությունում տնտեսական, սոցիալական, հոգևոր և ուրիշ ոլորտներում պետական հսկողությունից: Պետությունը կարող է աջակցել քաղաքացիական հասարակության ձևավորմանը, իսկ կարող է նաև խոչընդոտել, արգելակել, որը տեղի է ունենում ավելի հաճախ:

Պատմության մեջ ձևավորվել է այնպիսի գործընթաց, որ պետությունը, որպես հասարակական ինստիտուտ, իր ամրացման և զարգացմանը զուգընթաց, սկսել է իր ազդեցությանը ենթարկել քաղաքացիական հասարակությանը, թելադրում է իր կամքը և սահմանափակում նրա գործունեությունը: Հասարակությունը գտնվելով պետական իշխանության տակ, կորցնում է քաղաքացիականի հատկանիշները: Քաղաքացիական պետք է անվանել այն հասարակությանը, որտեղ մարդը օժտված է իրավունքներով և ազատություններով, որոնք ձևավորված են իրավաբանական համակարգի մեջ «իշխանության իրավունքում»: «Քաղաքացիական հասարակության իրավունքի» բացակայության դեպքում քաղաքացիական հասարակության գոյության մասին դատողությունները չափազանց վիճելի են: Միայն իր իրավունքների առկայության դեպքում է հասարակությունն անցում կատարում քաղաքացիականի մակարդակի:

Քաղաքացիական հասարակությունը մարդկանց բարձր զարգացած հանրույթն է, օժտված կենսագործունեության ինքնուրույն իրավունքով, ինքնակառավարվող է և հսկողություն է իրականացնում պետության վրա: Քաղաքացիական հասարակության առանձնահատուկ գծերը այդպիսով հետևյալն են. ազատ ասոցիացիաների, սոցիալական ինստիտուտների, սոցիալական շարժումների գործունեություններ են, անձի իրավունքի և ազատության իրականա-

---

[6] Красин Ю., Галкин А. Гражданское общество: Путь к стабильности // 1992, № 3, с. 73.

ցում, նրա անձեռնմխելիության և անվտանգության, տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնություն: Քաղաքացիական հասարակության տնտեսական հիմքը կազմում են սեփականության տարբեր ձևերը: Քաղաքացիական հասարակության միավորող սկզբունքներն են ինքնակառավարումը և արդարացիությունը: Գոյություն ունեն առնվազն երեք տեսանկյուն պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների վերաբերյալ: Համաձայն դրանցից մեկի, որը գալիս է Հեգելից, ընդունվում է, որ քաղաքացիական հասարակությունը համեմատաբար ինքնուրույն է, սակայն առաջնայնությունը տրվում է պետությանը: Պետությունը որպես համընդհանուր շահերի կրող, իրենէ ենթարկում քաղաքացիական հասարակությանը:

Երկրորդ տեսակետը պետությանն առավելություն չի տալիս քաղաքացիական հասարակության հետ համեմատելիս: Երկու հանրույթներն էլ, ըստ այդ տեսակետի, գոյակցում և փոխազդում են սոցիումի շրջանակներում:

Քաղաքացիական հասարակությունը, համաձայն երրորդ դիրքորոշման, իր հասունացման ընթացքում սկսում է գերակայել պետության հանդեպ և նրա վրա իրականացնել իսկ հսկողությունը:

Նշված դիրքորոշումները արտացոլում են պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների այս կամ այն չափով ամենից ընդհանուր օրինաչափ կապերը, օրենքներն ու միտումները: Այդպես, հեգելյան մեկնաբանությունը արտահայտում է ինչպես նախաքաղաքացիական, այնպես էլ քաղաքացիական հասարակության պետությանն ենթարկվելը: Այդ միտումը երևան է եկել մարդկային պատմության կայացման ու զարգացման ժամանակներից մինչև մեր օրերը: Հասարակությունն, իր հերթին, ձգտել և ձգտում է ազատվել պետության թելադրանքից: Այդ միտումը հատկապես դրսևորվել է ժողովրդավարացման զարգացման զուգընթաց: Հասարակությունը հանրաքվեների և այլ ժողովրդավարական ձևերի միջոցով փոխազդում է քաղաքական իշխանության վրա: Վերջինս ստիպված է հաշվի առնել ժողովրդի կամքի արտահայտությունը մարդկանց կենսագործունեությանը վերաբերող կարևոր որոշումներ կայացնելիս: Պետականության ամրապնդմանը կոչված են օժանդակել իշխանության բոլոր ճյուղերը, երկրի ժողովրդավարական ու հայրենասիրական ուժերը, զանգվածային լրատվական միջոցները: Դրան է կոչված նաև ձևավորվող քաղաքացիական հասարակությունը: Վերջինս, ըստ իր դիրքի, օգտվելով պետության թուլությունից, պետք է ավելի շատ իրավունքներ առգրավի պետությունից, սահմանափակի «իշխանության իրավունքը» և հաստատի «քաղաքացիական հասարակության իրավունքը»: Սակայն քաղաքացիական հասարակությունը չի նշանակում, որ ցանկանում է պետության

փլուզումը: Ժամանակակից պայմաններում պետությունը կարող է ահռելի մեծ դեր խաղալ հասարակության զարգացման գործում, եթե լինի իրավական ու սոցիալական պետություն: Քաղաքացիական հասարակության և պետության փոխազդեցությունը կապված է գլխավորապես սոցիալական ոլորտի, ազատությունների իրավունքի ապահովման, անձի սոցիալական պաշտպանության ու երկրում օրինականության ամրապնդման հետ: Հենց այդ գծի վրա են, առաջին հերթին, բախվում պետությունը և քաղաքացիական հասարակությունը: Լուծելով այդ հարցերը, պետությունը հնարավորություն ունի դառնալ իրավական, սոցիալապես կողմնորոշված, իսկ հասարակությունը ձեռք է բերում քաղաքացիական հասարակության հատկանիշներ:

Քաղաքացիական հասարակության էությունը կայանում է ոչ միայն մարդկանց օրինապահության մեջ, այլև նրանց արժանապատվությունն է, անձի ինքնուրույնությունը և ազատությունը գնահատելու ու պաշտպանելու ընդունակությունն է: Ներկա պայմաններում կարևոր է ստեղծել բոլոր անհրաժեշտ նախադրյալները քաղաքացիական հասարակության կայացման և ըստ ամենայնի ամրապնդման համար: Այնտեղ, որտեղ քաղաքացիական հասարակության ներուժը թույլ է, անպայմանորեն առաջ են գալիս պետության սոցիալական գործընթացների կրճատում, վոլյունտարիզմի և ավտորիտարիզմի համար նախադրյալներ: Քաղաքացիական հասարակության ձևավորման և ամրապնդման համար կարևոր է ամուր սոցիալական բազայի ստեղծումը: Պետությունն այդ դեպքում կարող է օգնել հասարակությանը նրանով, որ մշակի գիտականորեն հիմնավորված սոցիալական քաղաքականություն, որը որ առաջին հերթին վերաբերվի սեփականության բաշխմանը և բազմակացութային տնտեսության ստեղծմանը:

Հասարակությունն ինքնուրույն չի կարող հաղթահարել գոյություն ունեցող հոգևոր ճգնաժամը և զարգացող հոգևոր քայքայումը, եթե նրան օգնության չգա պետությունը, չառանձնացնի անհրաժեշտ միջոցներ մշակույթի, գիտության, արվեստի և հոգևոր ոլորտի այլ հնստիտուտների պահպանման ու զարգացման համար: Հասարակությունն օգտվում է ինֆորմացիայի պետական միջոցներից, սակայն նրան հարկավոր է նաև ինֆորմացիայի անկախ և ուժեղ միջոցներ: Այստեղ նույնպես կա ձևավորվող հասարակության և պետության փոխգործողությունների լայն դաշտ:

Ցանկացած հասարակության ապագան, այդ թվում և քաղաքացիականի, շատ բանով կախված է ընտանիքից, նրանում գոյություն ունեցող անդամների միջև հարաբերություններից, նրանում աշխատանքային, բարոյական էսթետիկական և այլ տիպի դաստիարակության դրվածքից, սերնդից

սերունդ փոխանցվող դրական արժեքներից, հայրենասիրական ավանդույթներից, հայրենիքի նկատմամբ սիրուց, բնության մասին հոգատարությունից և այլն: Անցումային շրջանի պայմաններում քաղաքացիական հասարակության կայացման հետ մեկտեղ առաջ է գալիս այլ միտում էլ՝ կլանային-կորպորատիվ հասարակության ձևավորման միտում, որում կլանների հիերարխիան և դրանց ազդեցության ոլորտը հաստատվում է ուժի սկզբունքով: Կլանները ձգտում են էկոնոմիկայի զարգացումը որոշել իրենց կորպորատիվ շահերով և ծառայեցնել իրենց պետական իշխանությունը: Վերը նշվածը մեր օրերի ռեալություններից են և դրանց չի կարելի հաշվի չառնել քաղաքացիական հասարակության հիմնախնդիրը լուծելիս:

Քաղաքացիական հասարակության ձևավորումը նշանակալի չափով որոշվում է պետության ու քաղաքացիների հարաբերություններով և պետական իշխանության պահպանման ու սոցիալական հիմնախնդիրների լուծմանն ուղղված լեգիտիմ ձևերով:

Գնահատելով Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իշխանության դիրքը, կարելի է նշել, որ գոյություն ունի իշխանության աղբյուրների մեծ դիֆուզիա: Սահմանազատված են իշխանությունը ու նրա կրողների պատասխանատվությունն իրենց գործունեության արդյունքների համար: Աճում է հասարակության (բնակչության) տարակուսանքը իշխանությունների նկատմամբ: Բացակայում է իշխանության գործադիր, օրենսդիր և դատական ճյուղերի փոխհարաբերությունների միջև հստակ որոշված իրավասություններն ու սկզբունքները: Իշխանության գործադիր ճյուղում և նույնիսկ դատականում իշխանական գործառույթների կենտրոնացման միտում գոյություն ունի:

Ներկայումս Հայաստանի հասարակության համար բնութագրական է սոցիալական կառույցի թերի զարգացվածությունը, հասարակության զարգացման դոմինանտ նպատակների իրականացման գաղափարների անորոշությունը: Որտեղից էլ կազմակերպական կառույցների չզարգացվածությունը, որոնք որ կարող էին արտահայտել բնակչության համապատասխան շերտերի շահերը: Բացակայում են գործուն քաղաքական կազմակերպություններ: Քաղաքական կուսակցությունների մեծամասնությունը փաստացի քաղաքական ակումբներ են, որոնք դեռ չեն ստեղծել ոչ համազգային կառույց, ոչ կարևոր ծրագրեր: Նրանք սահմանափակվում են ընդհանուր լոզունգներով, այլ ոչ հասարակական կյանքի արմատական հիմնախնդիրներին կոնկրետ պատասխաններ տալով: Այդ կուսակցությունները չունեն հստակ ընդգծված էլեկտորատ, նրանց լիդերները չեն կարող հաստատապես ասել, թե ո՞ր սոցիալական բազայի վրա են հիմնվում, ո՞ւմ շահերն են ներկայացնում, ի՞նչ նպատակներ են դրել և

ինչպե՞ս պետք է հասնեն դրանց: Եվ հասկանալի է, թե ինչու բնակչությունը պրակտիկորեն չի վստահում ոչ մի կուսակցության:

Բնութագրելով պետություն-հասարակություն-անձ փոխհարաբերությունները ՀՀ-ում, անհրաժեշտ է հաշվի առնել բնակչության վերաբերմունքը պետականության գաղափարի նկատմամբ: Ազգային պետության գաղափարը դեռևս որոշ չափով մակերեսային է և խորը արմատներ չի գցել բնակչության միջավայրում: Անորոշությունը և հայ հասարակության վերափոխման գործընթացի խորը հակասականությունը (ներհակությունը) խթանում է բացասական սոցիալական լարվածություն, չնայած նկատելի են նաև դրական կոնստրուկտիվ բնույթի քաղաքացիական ակտիվության աճ: Հասարակությունը ձգտում է կառուցողական ուժերի կոնսոլիդացիային, քաղաքացիների հասարակական հարաբերություններում սոցիալ-քաղաքական փոխըմբռնման, տոլերանտության փնտրտուքի: Դրության բարդությունը պետության, հասարակության և անձի հարաբերություններում ուժեղանում է նրանով, որ իշխանության ավանդական ու նոր կառույցները լիովին հսկողություն չեն իրականացնում և չեն կարող նույնիսկ կանխատեսել սպոնտան հասարակական պայթյունի հնարավորությունները: Առանձին ընդվզումներին արձագանքն առ այսօր որոշ զիջումներն են ամենից ուժեղ ճնշում գործադրող խմբերի նկատմամբ, կամ անհամապատասխան ուժային քայլերը:

Պետությունը հասարակության հետ իր հարաբերություններում, չունենալով հստակ նշված սոցիալական բազա, որոշակի քաղաքական դեմք, դիմում է պոպուլիստական միջոցների, որոնք պետության տնտեսական թուլության պայմաններում նպատակին չեն հասնում և առաջացնում են հասարակության բոլոր շերտերի դժգոհությունը: Էապես բարդացել է պետություն-անձ փոխհարաբերությունները: Անձի դիրքը ինստիտուցիաների նկատմամբ չի դարձել ավելի պաշտպանված: Պետությունը դարձել է նոր և հին բյուրոկրատիաների հարստացման միջոց, ի հաշիվ բնակչության հիմնական մասայի, որն էլ ուժեղացնում է պետության ու անձի հարաբերությունների օտարացումը:

Անորոշության, անվստահության իրադրությունը, որը բնութագրական է հասարակության մեջ եղած հարաբերություններին, ստեղծվում է արժեքա-նորմատիվ համալիրի բացակայությամբ, որը որ կկոնսոլիդացներ հասարակական խմբերին պետության շուրջ, կտար անձ-քաղաքացուն որոշակի կողմնորոշիչներ: Այդ ամենաբարդ խնդիրներից մեկն է, որն այսօր գոյություն ունի: Խոսքը վերաբերում է քաղաքակրթական ճգնաժամին, առանց որի հաղթահարման չի կարող խոսք լինել հասարակության կոնսոլիդացիայի, անձի սոցիալականաց-

ման արդյունավետ մեխանիզմների, հասարակությանն ենթակա պետության ձևավորման մասին:

Որպեսզի ձևավորվի ազգային զարգացման երկարաժամկետ օպտիմալ ռազմավարություն, անհրաժեշտ է նշել մի շարք ելակետային սկզբունքային դիրքեր, որոնք որ կառուցողականորեն կանխորոշեն դրա իրականացման գինանոցը և ռազմավարությունը: Այստեղ կարևոր են համարվում.

- համաշխարհային զագացման կենտրոնական վեկտորի գիտակցումը,
- այդ վեկտորին ադեկվատ (համաչափ) իր արտաքին քաղաքականության կառուցումը,
- ազգային շահերի կրողների որոշումը,
- անհրաժեշտ է գիտակցել գեոէկոնոմիկան, ընդունել որպես իրականության և հասնել դրան:

Դրողչեքները շատ բարձր են: Խոսքը վերաբերում է ժամանակակից գլոբալացվող աշխարհում գոյատևման և հիմնարար զարգացման ձևավորմանը: Հիմնախդիրը կայանում է նրանում, որ համշախարհային տնտեսական միջավայր դուրս գալը պայմանավորված է համապատասխան կազմակերպական «հանդերձավորմամբ»: Անհրաժեշտ է պետական մարմինների նոր արտաքին տնտեսական ու ներքին պետական հասարակական կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների նոր սկզբունքի անցնել, հստակ սահմանազատել իրավասությունները և գործառույթները: Ազգային շահերի իրականացումը նոր գեոէկոնոմիկական համակարգում պայմանավորված է ազգային էկոնոմիկայի, քաղաքական և էկոլոգիական քաղաքականության միջազգային տնտեսական համակարգի մեջ մտնելու պատրաստվածությամբ, համապատասխան համաշխարհային տնտեսավարման ռեալություններին էկոնոմիկայի և կառավարման ռազմավարության վերափոխմամբ, մի կողմից և ազգային ռազմավարական նպատակներով, առաջնայնություններով, շահերով և քաղաքացիական հասարակության ձևավորմամբ, մյուս կողմից:

Հիմնարար չափանիշը, որը կկանխորոշի կազմակերպական-կառավարչական կառույցների կազմն ու դրանց գործառնական բնույթը, այդ արտաքին տնտեսական կապերի ազգային մոդելի բնույթն է, նրա տիպը: Որտեղից էլ ունենք հետևյալ հիմնարար խնդիրը. Ազգային էկոնոմիկայի մեջ կառուցել համապատասխան արտաքին տնտեսական մակրոմոդել ազգային տնտեսական համակարգեր, որոնք ապահովում են երկրի տնտեսությունը համաշխարհային տնտեսության ոլորտի հետ փոխհարաբերություններն ազգային ռազմավարական խնդիրների լուծման նպատակով: